



Նոր

ԺՐԱԳ



9

Թ.Տարի : Թիւ 1

Յունուար

Եռամսեայ թերթիկ

2023

Հրատարակութեամբ

Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ Մեկուսի շրջանի վարչութիւն



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկսածական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻԻ 426 «ՄԱՐԶԻԿ»Ի

ՄԹՆՈԼՈՐՏԻՄ ՄԻՈՒԹԻԲՆԸ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ԲԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

Մթնոլորտ բառին կրնան յարմարիլ բազմաթիւ
ածականներ.- ջերմ, ընտանեկան, դրական, դաստիարակիչ,
խանդավառ, ճոխ, հաճելի...

Մական յիշեալ ածականներէն ոչ մէկը կրնայ հարազատօրէն
ներկայացնել համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկի մը մթնոլորտը:
Իսկ ի՞նչ խօսք, երբ այդ ձեռնարկը տեղի կ'ունենայ երեք
տարուան անբնական պայմաններէ ետք՝ քորոնայի
համաճարակ, միութենական գործունէութեան
սահմանափակում, ճամբորդութեան արգելքներ,
համաշխարհային տնտեսական տագնապ, Արցախի պատերազմ եւ անոր յաջորդած
մտահոգիչ դէպքերու զարգացումներ:

Նման պայմաններու մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր կազմակերպելը,
բազմախարիւր մարզիկ-մարզիկուհիներ հայրենի հողին վրայ համախմբելն ու
միութենական կեանքը վերականգնելը պիտի ենթադրէր հսկայական ճիգ եւ ներդրում: Ու
նաեւ՝ մարդկային եւ նիւթական լայն միջոցներ, տասներկու մարզաձեւերու մրցակցութեան
կողքին, առաջին անգամ ըլլալով իրագործելու համար յատուկ խնամքի կարօտ
պատանիներու «Հրաշք» մարզախաղերը:

Անկարելի կարելի դարձնելու մարտահրաւերն էր, որ կը դրուէր Հ.Մ.Ը.Մ.ի
պատասխանատուներուն դիմաց, տեսակաւոր փորձութիւններէ ետք յուսահատելու եւ
անխախտ հաւատքով դարձեալ երիտասարդութեան հետ ըլլալու, անոնց հետ եւ անոնցմով
խանդավառուելու, անոնց ընդմէջէն հայութեան աւելի լաւ
ապագայի մը հեռանկարը տեսնելու համար:

Պէտք էր թօթափել հիասթափութեան, ընկրկումի եւ
նահանջի բոլոր տրամադրութիւնները եւ վերադառնալ
բնականոն կեանքի ընթացքին՝ ինքնակազմակերպումին,
միութենական նպատակներու հետապնդումին, միտք ու
մկան, հոգի ու կամք, սիրտ ու խիղճ զարգացնելու
արուեստին:

Պէտք էր յաղթահարել մեր շուրջը տիրող
պարտուողական ոգիի բոլոր արտայայտութիւնները, երիտասարդութեան առիթ ընծայելով
վայելելու յաղթանակներու բերկրանքը, սեփական ուժի հանդէպ ինքնավստահութիւնը՝
լաւագոյնին եւ հզօրագոյնին հասնելու կարելիութիւնը:

Եւ դեռ, պէտք էր անգամ մը եւս շէշտել Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական դերն ու
առաքելութիւնը՝ միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերու մարզական շարքերը





Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

շարժումի մէջ դնելու եւ գիտակից մօտեցումով զանոնք մարմնակրթական նորանոր նուաճումներու մղելու համար:

Իսկ կարեւորագոյնը, պէտք էր վերագտնել անցնող երեք տարիներու մեծագոյն բացական՝ ՄԹՆՈԼՈՐՏԸ: Եղբայրական գործակցութեան, անկեղծութեան, հարազատութեան այն ջերմ մթնոլորտը, որ ուս-ուսի, թեւ-թեւի, հազարաւորներ կը բարձրացնէ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը յաղթանակ մը արձանագրէ, եւ նոյնքան մը հաւատաւորներ կը բարձրացնէ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը... պարտութիւն մը ճաշակէ, որովհետեւ ո՛չ յաղթանակները կը շլացնեն եւ ո՛չ ալ պարտութիւնները կ'ընկճեն այս միութիւնը: Հ.Մ.Ը.Մ. պայմանաւորուած չէ բաժակներու եւ ախոյեանութիւններու տիրացումով:

Հաւաքական խանդավառութեան ախոյեանին համար խաղն ու վագրը, փորձն ու մրցումը միջոցներ են անցեալին ճակատագիրի բերումով որբացած, գաղթական դարձած, իսկ այսօր՝ Մփիւռքի օտար հորիզոններուն տակ հասակ առած պատանիները այլասերիչ բարքերէ եւ խաթարիչ մոլութիւններէ հեռու պահելու համար, կիրք մարմինի մէջ քաղաքակիրթ մարդը կերտելու, անհատին մէջ մտքի եւ հոգիի ներդաշնակ գոլգորդութիւն ստեղծելու եւ բարոյական ու մարդկային ըմբռնումներու մէջ ազգային գաղափարականութեան սկզբունքները արմատացնելու համար:

Այլ բան չէ եղած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն եւ յաջորդական ղեկավար մարմիններուն նպատակը միութեան ստեղծումէն ի վեր, եթէ ոչ՝ Հ.Մ.Ը.Մ.ի իւրայատուկ մթնոլորտին մէջ, մարմինի եւ մկաններու մշակման հետ ազգային նկարագիր մշակել, ինքնութիւն եւ պատկանելիութիւն կերտել, գերագոյն արժէքներու գիտակցութիւն փոխանցել, որպէսզի Ազգն ու Հայրենիքը, Եկեղեցին ու Ընտանիքը սերունդներու համար ըլլան նուիրական սրբութիւններ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, ինչպէս համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր հանդիպումները, տակաւին, կոչուած են ունենալու յաւելեալ պարտականութիւն մը. աշխարհի չորս ծագերէն եկող եւ քաղաքակրթական այլազան ազդեցութիւններու ենթակայ մարզիկ-մարզիկուհիներու մէջ հաւաքական մտածողութիւն սերմանել եւ այդ մտածողութիւնը երկիրէ երկիր կամուրջ դարձնել՝ հայ երիտասարդութեան ընդհանրական դիմագիծ տալու եւ անով ազգը վերանորոգելու համար:

Ահա՛, չորս տարին անգամ մը այս ճշմարտութիւնները կը պարզուին բոլորին: Նորերը փորձով կը վկայեն, իսկ հիները գոհունակութեամբ կը հաստատեն, թէ ինչպէս, հակառակ ժամանակի եւ միջավայրի բոլոր դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. կը մնայ հաւատարիմ իր էութեան եւ կոչումին, կը մնայ գերազանցապէս ՄԹՆՈԼՈՐՏԻ՝ միութիւն, եւ իբրեւ յոյսի աւազան, իր կենարար մթնոլորտին մէջ հայեցի դրոշմով կը մկրտէ իրեն դիմող հազարաւոր պատանիներն ու երիտասարդները, կեանքին վերադարձնելու համար ֆիզիքապէս տոկուն, հոգեպէս առողջ, գաղափարապաշտ եւ յանձնառու տղաք ու աղջիկներ, պատրաստ՝ ընծայուելու այն ժողովուրդին, որուն ծառայելու կոչումով ճամբայ ելաւ այս միութիւնը 104 տարի առաջ եւ որուն ծառայութեամբ իր ճամբան կը շարունակէ Ան, մեր կեանքի ներկային եւ պատմութեան մէջ:





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Սարգսյան

ՄԱՐԴԻԿ

Տուն / Լրատու / Սյուր

ՀՄԸՄ-ի Միջդիւանական 10-րդ Խորհրդաժողովի Բացման Պաշտօնական Հանդիսությունը

ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան կազմակերպութեամբ, երէկ՝ հինգշաբթի, 10 նոյեմբերի երեկոյեան ժամը 7:30-ին, Չալքայի «Ուորուիք Սթոն 55» պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի միջդիւանական 10-րդ խորհրդաժողովի պաշտօնական բացումը՝ ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, հոգեւոր առաջնորդներու, պաշտօնական հիւրերու, ՀՄԸՄ-ի ներկայ եւ նախկին Կեդրոնական վարչութիւններու անդամներու եւ խորհրդաժողովին մասնակից՝ 22 շրջաններու ներկայացուցիչներու:

Հանդիսութեան բացման խօսքով հանդէս եկաւ Ծովակ Թագեան-Թիւթէլեան: Հիւրընկալ շրջանի՝ ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ Հայկ Թապագեան: ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան պատգամը ուղղեց ատենապետ Վաչէ Նանարեան, իսկ փակման խօսքով հանդէս եկաւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեան:

Կիրարկուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր եւ ցուցադրուեցաւ ՀՄԸՄ-ի 104 տարիներու երթը ներկայացնող յատուկ տեսանիւթ:





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսումսական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

14 Նոյեմբեր 2022

Անթիլիասի Մայրավանք Եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք Այցելութեամբ՝ ՀՄԸՄ-ի Միջդիւանական 10-րդ Խորհրդաժողովը Աշխատանքները Աւարտեց Յաջողութեամբ

Երկօրեայ աշխատանքային նիստերէ ետք, ՀՄԸՄ-ի միջդիւանական 10-րդ խորհրդաժողովը աշխատանքները աւարտեց շաբաթ, 12 նոյեմբերի երեկոյեան: Ժողովը ուր նիստերով քննեց միութեան անցնող երեք տարիներու գործունէութեան զանազան բնագաւառները եւ հունաւորեց մինչեւ Պատգամաւորական յաջորդ Ընդհանուր ժողով (հոկտեմբեր 2023) նախատեսուած ծրագիրները. երիտասարդական համագումար, սկսումսական «Արարատեան» կարգի դասընթացքի ամբողջացում, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի շրջաններու համար «Վկայեալ» կարգի սեմինար-բանակումներ, առցանց մարզախաղեր, համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակում եւ այլն:



Երէկ, կէսօրէ առաջ, խորհրդաժողովի մասնակիցները այցելեցին Անթիլիասի մայրավանք, ներկայ գտնուեցան ննջեցեալ եւ մահացած ՀՄԸՄ-ականներու յիշատակին Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուած հոգեհանգստեան պաշտօնին, որուն հանդիսապետեց Արամ Ա. վեհափառ հայրապետը: Ապա, աշխարհի 22 երկիրներէն ժամանած ՀՄԸՄ-ականներու պատուիրակութիւնը յարգանքի իր տուրքը մատուցեց մայրավանքի շրջափակին մէջ գտնուող Հայոց ցեղասպանութեան յուշարձան-մատրան:

Այնուհետեւ, պատուիրակութեան անդամները այցելեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետին եւ ստացան անոր հայրապետական օրհնութիւնները եւ խրախուսական խօսքերը: Այս առիթով, ՀՄԸՄ-ի ընտանիքին անունով յուշանուէր մը յանձնուեցաւ վեհափառ հօր:

Ապա, խորհրդաժողովի մասնակիցները ներկայ գտնուեցան Պուրն Համուտի Ազգային գերեզմանատան մէջ ՀՅ Դաշնակցութեան նախատակ եւ ննջեցեալ անդամներու յիշատակին մատուցուած հոգեհանգստեան պաշտօնին եւ յարգանքի ծաղկեպսակ մը զետեղեցին ՀՅԴ Պանթէոնին:



Հ.Ս.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսածական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Խորհրդաժողովի մասնակիցներուն վերջին կանգառը եղաւ Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքը, ուր ՀՄԸՄ-ական պատասխանատուներ ծանօթացան վանքին զանազան բաժիններուն, Ս. Աստուածածին մատրան եւ Եղեռնի նահատակաց յուշարձանին, որուն առջեւ տեղի ունեցաւ հաւաքական աղօթք եւ ծաղկեպսակի զետեղում: Դպրեվանքի տեսուչ Պարոյր վրդ. Շերնեզեան դպրեվանքին ու անոր սաներուն անունով յուշանուէր մը յանձնեց ՀՄԸՄ-ին:



Յայտնենք, որ ՀՄԸՄ-ի միջդիւանական 10-րդ խորհրդաժողովի աշխատանքները կանխեցին ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան 2019-2023 քառամեակի լիազումար նիստերը, որոնք տեղի ունեցան չորեքշաբթի, 9 եւ հինգշաբթի, 10 նոյեմբեր 2022-ին:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական


Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Ծանոթ : Օրուայ Հ.Մ.Ը.Մ.-ի Միջ դիւանական խորհրդաժողովին « որը տեղի ունեցաւ 11-13 Նոյեմբեր 2022 Թ. Պէրոյթ – Լիբանան ին մէջ» մասնակցեցան Միութեան ստեղծող Եղբ. Սեւան Կորկիսեանը եւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ մեկուսի շրջանի ստեղծող Եղբ. Բաֆֆի Փօլօեանը:






13 Նոյեմբեր

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Այս օրերուն Լիբանանի մէջ տեղի կ'ունենայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Կեդրոնական Վարչութեան լիակատար նիստը, ինչպէս նաեւ իր աշխարհատարած շրջաններու վարչութիւններու միատեղ հանդիպումը:


Այս առիթով, այսօր՝ Կիրակի, 13 Նոյեմբեր 2022-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Ամմահ Պատարագի աւարտին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Հ.Մ.Ը.Մ.ի նահատակներու եւ ննջեցեալներու հոգիներու խաղաղութեան համար:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնն ու խորհրդածողովի մասնակից բոլոր անդամները Ս. Պատարագէն անմիջապէս ետք ուղղուեցան Հայոց Յեղասպանութեան նահատակներու նշխարները պարունակող Սրբոց Նահատակաց մատուո՝ մատուցելու իրենց յարգանքի տուրքը սրբացեալ նահատակներուն: Ապա, Միութեան շէփորախումբը հնչեցուց Լիբանանի, Հայաստանի ու Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգերը, ինչպէս նաեւ «Ի վեհ բարձանց» ու «Կիլիկիա» մաղթերգերը: Յիշեալ ամփոփ յայտագրէն անմիջապէս ետք, Միութեան պատասխանատուները եւ խորհրդածողովի մասնակիցները բարձրացան Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետին օրհնութիւնն ու հայրական յորդորները:

Հանդիպման ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վաչէ Նաճարեան Նորին Ս. Օծութեան յանձնեց Միութեան կողմէ պատրաստուած յուշանուէր մը, որուն վրայ քանդակուած էր Հայրապետին հետեւեալ խօսքը. «Հ.Մ.Ը.Մ.ը սովորական իմաստով մարմնամարգական կազմակերպութիւն մը չէ, այլ առաքելութիւն է՝ իր էութեամբ ու նպատակով»:





Վեհափառ Հայրապետը ողջունելով Միության անդամներուն ներկայութիւնը՝ ըսաւ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր համահայկական առաքելութեամբ ոչ միայն հոգեւոր տունը դարձած է ողջ հայութեան, այլ նաեւ ազգային տունը՝ մեր ժողովուրդի բոլոր գաւազներուն, առանց խտրութեան: «Անթիլիասին խօսքը իր գո՛րծն է: Այս յանձնառութեամբ իր առաքելութիւնը կը կատարէ Հայրապետական այս Ս. Աթոռը: Անոր առաքելութիւնը միայն կրօնական պարունակի մէջ պէտք չէ դիտել, այլ՝ համաժողովրդային ու համահայկական: Այս առաքելութեան մշակներն են, հայ հոգեւորականին կողքին, ազգանուէր գործունէութիւն ծաւալող մեր միութիւնները ու կազմակերպութիւնները, որոնցմէ մէկն է Հ.Ս.Ը.Մ.ը», յայտնեց Հայրապետը: Լուսարձակի տակ բերելով Միության կարեւոր դերը հայ կեանքէն ներս՝ ան շեշտեց, թէ հայրենիքին ու ազգին գերագոյն իտեալներուն իրականացման նկատմամբ մեր ունեցած հաւաքական առաքելութեան մէջ կարեւոր տեղ գրաւած է Հ.Ս.Ը.Մ.ը: «Անիկա սոսկ մարմնակրթական կազմակերպութիւն մը ըլլալէ անդին, մեր ժողովուրդի հոգեւոր, բարոյական, ազգային, մշակութային ու պահանջատիրական արժէքները իր մէջ բովանդակող Միութիւն մը եղած է», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Հանդիպումէն ետք խորհրդաժողովի մասնակիցները բարձրացան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք: Անոնք Դպրեվանքի տեսչութեան առաջնորդութեամբ ուղղուեցան Հայոց Ցեղասպանութեան նահատակներու ու վերածնունդի յուշարձան, գետեղեցին ծաղկեպսակ եւ աղօթք բարձրացուցին առ Աստուած բոլոր նահատակ հայորդիներու հոգիներու խաղաղութեան համար:





Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

9 Նոյեմբեր

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՉ

Չորեքշաբթի, 9 Նոյեմբեր 2022-ի առաւօտեան, Պէյրութի մէջ ընթացք առին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 2019-2023 քառամեակի երրորդ լիազումարի նիստերը՝ օրակարգի վրայ ունենալով կազմակերպական, սկստական, մարզական, քարոզչական, երիտասարդական, տնտեսական եւ շարք մը այլ կէտեր:


Նիստերը կ'երկարին երկու օրուան վրայ եւ կը նախորդեն Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովին աշխատանքները:



6 Նոյեմբեր

Խմբապետական կազմի կազմակերպական աշխատանքներ

Այսօր, 6 Նոյեմբեր 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նստավայրին մէջ ընթացք առին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի խմբապետական կազմի կազմակերպական աշխատանքները:





Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Սյուր

20 Հոկտեմբեր

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԴԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՇՈՒԷՏԻ ՕՐԷՊՐՈՒ ԲԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Շաբաթ, 15 Հոկտեմբեր 2022-ին, Շուէտի վեցերորդ մեծագույն քաղաքին՝ Օրէպրուի մէջ հիմնադիր ժողովը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղին, որ գործունէութեան սկսած է վեց ամիսէ ի վեր: Հիմնադիր ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան, 18 տարիքը ամբողջացուցած 29 անդամներ եւ նորագիր 18 սկաւտներ: Ժողովին հիւրաբար մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի երեք մասնաճիւղերու՝ Սթոքհոլմի, Վեսթերոսի եւ Սոտերթելիոյ Մեկուսի վարչութիւններու ներկայացուցիչները, Սոտերթելիոյ մասնաճիւղի սկաւտական խմբապետական կազմը եւ Հ.Յ.Դ. «Հիւսիսեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Մանօ Խորոզեան:



Օրէպրու Մեկուսի Շրջանը ունի 84 անդամագրուած անդամ:

Հիմնադիր ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, մասնաճիւղի կազմակերպչական յանձնախումբը կարդաց Օրէպրուի Հ.Մ.Ը.Մ.ի վեց ամսուան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Այնուհետեւ, ժողովականները կատարեցին մասնաճիւղին գործունէութեան կապուած առաջարկներ եւ ընտրեցին Օրէպրուի անդրանիկ վարչական կազմը՝ բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէ.- եղբ. Շանթ Սահակեան, քոյր Սիլվի Թանաշեան, եղբայրներ Բաֆֆի Մընճեան, Յակոբ Մելքոնեան, Թովմաս Սահակեան, Նուպար Սահակեան եւ Տիգրան Մաթոսեան:





Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Ընտրություններ են, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան վարչության փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրը եւ դրօշը, իսկ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան՝ միության սկսումական դրօշը:



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ / ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հիմնադիր ժողովին յաջորդեց սկսումական անդրանիկ խոստման արարողությունը, որուն՝ Կեդրոնական Վարչության անդամներու կողքին ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովիւ Վաղարշ Քինյ. Իսախանեան, Օրէպրուի թաղական խորհուրդի ատենապետ Փորտ Նալպանտեան, շուէատական սկսումական Օրէպրու նահանգի Ծրջանային ընդհանուր խմբապետ Ալպին Էտյունտ, ՊԻԼՏԱ կազմակերպության ներկայացուցիչը, միություններու ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Շանթ Սահակեան եւ հրաւիրեց եղբ. Յարութ Տէր Ներսէսեանը եւ քոյր Նենսի Խաչատուրեանը՝ ստանձնելու հերթապահությունը եւ վարելու սկսումական արարողությունը:

Կատարուեցաւ 14 սկսում նորագիրներու խոստման արարողություն: Նորագիրները օրհնեց Վաղարշ Քինյ. Իսախանեան:



Ողջոյնի եւ յաջողության խօսքեր արտասանեցին Օրէպրուի Ծրջանային ընդհանուր խմբապետ Ալպին Էտյունտ, թաղական խորհուրդի ատենապետ Փորտ Նալպանտեան, Վաղարշ Քինյ. Իսախանեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբայր Նաճարեան իր խօսքին մէջ շեշտեց եկեղեցի-դպրոց-սկումը երրորդության կարեւորությունը, իբրեւ հայապահպանման կռոււն: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. եղած է ու կը մնայ այն ապահով միջավայրը, որուն՝ ծնողներ կրնան վստահիլ անվարան: Հ.Մ.Ը.Մ. մարդակերտումի եւ հայակերտումի հնոց է նորահաս սերունդներուն համար: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, սկսումական եւ մարզախաղերու ճամբով նկարագիր եւ դիմագիծ կը կերտուի: Օտար ափերուն Հ.Մ.Ը.Մ. պատուար է ձուլումի եւ այլասերումի դէմ:



Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

28 Հոկտեմբեր

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի Վարչությունը եւ մարզական համալիրի կառուցման «Իմաստուններու յանձնախումբ»ը կու գան տեղեկացնելու, թէ Ուրբաթ, 28 Հոկտեմբեր 2022-ի առաւօտեան ժամը 10.30-ին, Փարիզի արուարձաններէն Իսի Լէ Մուլինոյի մէջ ստորագրուեցաւ պայմանագիր մը, որ տեղւոյն քաղաքապետութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին կը շնորհէ նորակերտ մարզական համալիր՝ բաղկացած պասքէթպոլի դաշտէ, ժողովասրահներէ, ճաշարանէ, 400 հոգինոց սրահէ եւ տարբեր խաղավայրերէ:

Պայմանագիրը քաղաքապետ Պրն. Անտրէ Սանթինիի եւ Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի վարչութեան միջեւ ստորագրուեցաւ 99 տարուան համար եւ վերանորոգուելու պայմանով: Տարիներու երազով եւ աշխատանքով, համբերութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ականի հաւատքով Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի յաջորդական Վարչությունները եւ անդամները կարողացան յաջողցնել այս մեծ ծրագիրը, որ պիտի ծառայէ ոչ միայն Ֆրանսայի, այլեւ ամբողջ Եւրոպայի հայ պատանիներու եւ երիտասարդներու ֆիզիքական առողջ դաստիարակման եւ հայեցի մթնոլորտով կազմաւորման աշխատանքին: Մարզահամալիրին շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս առիթն ու կարելիութիւնը պիտի ունենայ թիւով ու որակով յաւելեալ զարգացման ու բարգաւաճման, հաւատարիմ միշտ բարձրանալու եւ իր հետ համակիր լայն շրջանակները եւս բարձրացնելու միութեան նշանաբանին:

Կեցցեն «նահատակ ցեղի անմահները»:

Կեցցէ Հ.Մ.Ը.Մ.ը:

Փարիզ, 28 Հոկտեմբեր 2022

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՍԱՐՁԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Հաղորդագրություն

14 նոյեմբեր 2022-ին Պեյրուքի մէջ գումարուեցաւ ՀՅԴ ուղեկից միութիւններու խորհրդաժողովը: Խորհրդաժողովը հրաւիրող ՀՅԴ բարձրագոյն մարմինէն բացի, ժողովին կը մասնակցէին՝ Համագգային հայ կրթական եւ մշակութային միութեան, Հայ օգնութեան միութեան, Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան Կեդրոնական վարչութիւնները, ինչպէս նաեւ՝ ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի ներկայացուցիչը:

Օրակարգային հարցերու քննարկումէն առաջ ուղեկից միութիւններուն կողմէ ներկայացուեցան ընդհանուր զեկոյցներ՝ կատարուած աշխատանքներուն եւ յառաջիկայի գործունէութեան վերաբերեալ:

Խորհրդաժողովի քննարկումներուն առանցքային հարցերէն մէկը դարձաւ երիտասարդութեան թեման: Ներկաները կարելոր նկատեցին երիտասարդութեան ներգրաւումը պատասխանատու աշխատանքներու մէջ՝ իբրեւ կարելոր պայման միութիւններու գործունէութեան նոր աւիշ հաղորդելու, ազգային ապագայի համար գործիչներու նոր սերունդի կայացման համար:

Կարելոր նկատուեցաւ միութիւններու գործունէութեան ձեւերուն եւ մեթոտներուն արդիականացման խնդիրը, ինչ որ կարելիութիւն պիտի տայ ոչ միայն քայլ պահելու եւ լսելի ըլլալու, այլ նաեւ հայրենակիցները հետապնդուած նպատակներու գիտակցութեամբ վարակելու համար:



Հիմնական սեպուեցաւ քարոզական մեթոտներու եւ աշխատանքներու արդիականացումն ու կատարելագործումը, առանց որոնց, ոչ միայն կարելի չէ հանրութեան պատշաճ կերպով ներկայացնել իրականացուող աշխատանքները, այլ նաեւ՝ զանոնք արդիւնաւետօրէն ծառայեցնել ազգային նպատակներուն:

Խորհրդաժողովը շեշտեց միութիւններու աշխատանքներու համադրման անհրաժեշտութիւնը՝ բազմաթիւ ազգանպաստ նախաձեռնութիւններու ծրագրման եւ իրականացման նպատակով:





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Խորհրդաժողովի քննարկումներուն մէջէն կարմիր թելի պէս կ'անցնէր հայոց զոյգ պետութիւններուն ներկայ վիճակէն բխող կատարուելիք աշխատանքներու հարցը: Ժողովականները համոզուած էին, որ այսօրուան տագնապալի իրողութիւնները ոչ թէ կրաւորականութեան պէտք է մատնեն, այլ պէտք է մղեն առաւել եռանդուն գործունէութեան՝ այն գիտակցութեամբ, որ իբրեւ ուրոյն ճակատի զինուորներ՝ Դաշնակցութեան միութիւններն ու միութենականները ունին կարելոր առաքելութիւն: Ըստ քննարկումներուն, որդեգրուած նպատակի եւ գործի ուղիով պէտք է հետապնդել ազգային առողջ ուժերու համախմբումը, ինչ որ միայն կրնայ լաւագոյն գրաւականը հանդիսանալ ազգային եւ պետական ճգնաժամերը յաղթահարելու ճամբուն վրայ: Կարելորութեամբ շեշտուեցաւ, որ ազգային մշակոյթը, կրթութիւնն ու բարեսիրութիւնը, ինչպէս նաեւ ազգային գործի մէջ ներգրաւուած գիտակից ու հայրենասէր երիտասարդութեան առկայութիւնը լաւագոյն միջոց են, որոնք ամէն տեսակի բաժանարարները վերացնելով՝ կրնան ծառայել ազգի համախմբման եւ ազգային ինքնագիտակցութեան արթնացման գործին:

Անգամ մը եւս արժեւորելով կատարուած աշխատանքը՝ Խորհրդաժողովը վերահաստատեց Դաշնակցութեան ուղեկից միութիւններուն ազգանուէր գործունէութիւնը անվարան շարունակելու, հայութեան անժամանցելի տեսլականներուն նոր թափով եւ անսակարկ ծառայելու յանձնառութիւնը:

ՀՅԴ ՈՒՂԵԿԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ



ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԻՋ - ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱՐ

ՀՕՍ - ՀՍԸՍ - ՀԱՍՍԱԳՈՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ



Տեղի կ'ունենայ երկուշաբթի, 14 նոյեմբեր 2022-ին,
Երեկոյեան ժամը 7:30-ին,
«Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Հրաւիրուած են բոլոր միութենականները եւ համակիրները:



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսողական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տոմ / Լրատու / Այսօր

27 Հոկտեմբեր

ԼՈՅՍ ՏԵՍԱԲԻ - ՄԱՐԶԻԿ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու նուիրում յատուկ թիւ, 192 էջով
42-րդ տարի, թիւ 426

- ԽՄԲԱԳՐԱԿԱՆ « Մթնոլորտի՝ միությունը ».


- ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ « Գիր օրհնութեան եւ գնահատանքի առ Հ.Մ.Ը.Մ.ի
Կեդրոնական Վարչությունն » .

- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ « Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան այցելությունը Արամ Ա. Վեհապառին եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ.
Կաթողիկոսին » . « Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան
այցելությունը Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպանին » .

- ՄԱՐԶԻԿԱՐԴԵՐԷՆ ԱՌԱՋ « Մարզախաղերուն վիճակաձգությունը
Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու ծանօթացման մամլոյ ասուլիսը
Հանդիպում մարզական պատասխանատուներու հետ ».

- ԲԱՑՈՒՄԸ « Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու բացման մեծաշուք
հանդիսությունը » . « Կառչած մնալ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներու սկզբունքներուն եւ
ազգային արժեքներուն- Վաչէ Նանարեան » . « Հ.Մ.Ը.Մ. մեր հպարտութեան
աղբիւրն է եւ ազգային անխորտակելի կամքի մարմնաւորումը- Յակոբ
Տէրիսպատուրեան » . « Հաւաքում՝ փաստելու մեր աննկուն կամքը առաջ
շարժուելու, իրար սատարելու, իրար յաղթանակներով տոգորուելու եւ նախկինից
աւելի ուժեղ դուրս գալու- Մանտրա Վարդանեան » . « Պատմական իրադարձութիւն
մը Հ.Մ.Ը.Մ.ի 104-ամեայ երթին ընթացքին- Մանուէլ Մարսիլեան ».

- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ - ՈԳԵԿՈՉՈՒՄ « Սեփական կեանքը ազգասիրութեամբ եւ
հայրենասիրութեամբ արժեւորելու դասը » . « Մինչեւ որ օրին մէկը իրարու համընկնին
մեր պետութեան եւ հայրենիքին սահմանները- Վ. Աւագեան » . « Ցեղասպանութեան



արհաւիրքը եւ անկախութեան սխրանքը մարզիկ-մարզիկուհիները կը վերապրին Ծիծեռնակաբերդ եւ Մարդարապատ այցելութեամբ» . « Ուխտենք մնալ կամաւոր բանակը մեր ազգին ու հայրենիքին- Թ. Օրտողեան » . « Լիզպոնի հերոսական գործողութեան 39-ամեակի նշում՝ յիշատակելի երեկոյով » .

- ՄԵԾԱԳՈՅՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝ «ՀՐԱԾՔ»Ը «Կատարեալ հոգատարութեան եւ անխտրական մօտեցումի լաւագոյն արտայայտութիւնը՝ «Հրաշք» մարզախաղերը » . ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ «Արեւմտեան Մ. Նահանգներ ֆութպոլի ախոյեան չորրորդ անգամ ըլլալով » . « Արեւելեան Մ. Նահանգներու տղոց խումբը գահընկէց կ'ընէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական պասքէթպոլի վեց անգամ ախոյեան Արեւմտեան Մ. Նահանգներու խումբը » . « Հ.Մ.Ը.Մ. Աւստրալիա առաջին անգամ ըլլալով կը տիրանայ պասքէթպոլի աղջկանց առաջնութեան տիտղոսին » . « Պասքէթպոլի 3 x 3 մրցումներուն Լիբանանի տղոց ու աղջկանց գերազանց տիրապետութիւն » . « Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջիկները իրենց կը վերապահեն վոլիպոլի համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջնութեան բաժակը » . « Ֆութսալի հարաւային Ամերիկայի տղոց խումբը անմրցելի ախոյեան » . « Հ.Մ.Ը.Մ. Արցախի փինկ-փոնկի տղոց ու աղջկանց ախոյեան » . « Թենիսի համա-Հ.Մ.Ը.Մ.ական նոր ախոյեանները Թեիրանէն եւ Լիբանանէն » . « Սուրիոյ շրջանէն Յակոբ Մայք ճատրակի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ախոյեան » . « Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջիկները ծովափի վոլիպոլի լաւագոյնները » . « Հ.Մ.Ը.Մ.ական կոլֆը ունեցաւ առաջին ախոյեանը՝ Տանիել Քէշեան Լիբանան կը վերահաստատէ աթլէթիզմի մրցումներուն իր անվիճելի գերակայութիւնը » . «Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ Լոնտոնի ներկայացուցիչները կը հնձեն լողի առաւելագոյն թիւով մետալները » . « Անհատական կարողութեան խաղերը կը ստեղծեն իւրայատուկ խանդավառութիւն » .

-ՓԱԿՈՒՄԸ « Մարզախաղերու փակման հանդիսաւոր արարողութիւնը Մարզախաղերու լաւագոյնները » . « Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու խմբային ընդհանուր արդիւնքներ » . « Մարզախաղերու ընդհանուր արդիւնքներու պատկեր » . «Մարզախաղերու ոգին եւ յիշատակները մասունքի նման տանիլ աշխարհի չորս կողմը-Վաչէ Նաճարեան » .

- ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵՏՔ«Հրաժեշտը՝ յուշանուէրներու փոխանակումի հանդիպումով Հայաստանի փողոցները լեցուցէ՛ք Հ.Մ.Ը.Մ.ական ձեր շունչով եւ ոգիով- Գլաուտիա Թորգոմեան» . «Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակին «ղուսաւոր կենաց»ը . « Տօնահանդէս » .

- ԱՆԴՐԱԴԱՐՁ . « Ներկաները » . « Նշումներ » . « Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերուն ի նպաստ կատարուած նուիրատուութիւններ » .



Այնլի 26 Նոյեմբեր 2022



Հ.Մ.Ը.Մ. Այնլի Մեկուսի շրջանի 24-րդ մարզահանդես

Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական վարչության Հովանավորությամբ, Այնլի քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց Պաղտասարեանի հոգեւորությամբ, Հ.Մ.Ը.Մ. Այնլի մեկուսի շրջանի կազմակերպությամբ, «Արամ Մանուկեան կոմիտէութեան», Այնլի-ի Ս.Գ.Լ. եկեղեցւոյ վարչութեան, Հ.Օ.Մ.-ի, Հ.Յ.Դ. Գ.Ն Երիտասարդական միութեան, Հոյանտայի Հ.Բ.Ը.Մ.եան, Կիլիկեայ Միութեան, Երեւան Միութեան» ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ. «Սթօքհոլմ, Սյունիսի, Ալքմառ, Առնհեմ եւ Այնլի» մեկուսի շրջաններու մարզիկներու, մասնակից սկաւաւներու եւ ներկայացուցիչներու մասնակցությամբ շաբաթ 26 Նոյեմբեր 2022 Թ.ին ժամը 10:30-ին Այնլի քաղաքի (Sporthal Schelfhorst) մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Այնլի Մեկուսի շրջանի 24-րդ մարզահանդեսը:

Մարզահանդեսէն օր մը առաջ Ուրբաթ 25 Նոյեմբեր-ին (առաջին անգամ ըլլալով միութեանս 25 տարուայ պատմութեան ժամանակաընթացքին) միութեանս սրահին մէջ տեղի ունեցաւ մարզահանդեսի մասնակից խումբերու սեղանի թէիսիսի եւ բաղմինատոնի մրցաշարերը :



-Սեղանի թէիսիսին մասնակցած էին 6 մարզիկներ . Մրցաշարի եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ «Եդր.Արթուր Դիֆոնտեան»-ի եւ Հ.Մ.Ը.Մ. Այնլի «Եդր.Արարատ Հովհաննէսեան»-ի միջեւ . մրցաշարը աւարտուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Այնլի «Եդր.Արարատ Օհաննէսեան»-ի առաջնութիւնը գրաւելով եւ երկրորդութիւնը Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ «Եդր.Արթուր Դիֆոնտեան»-ին:



-Բաղմինտոնի մրցաշարին մասնակցած էին 5 մարզիկներ. Մրցաշարի եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո «Եդր.Շիրակ Դատուրեան»-ի եւ Քոյր Մարիամ Մխիթարեան»-ի միջեւ . Մրցաշարը աւարտուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո «Եդր. Շիրակ Դատուրեան»-ի առաջնութիւնը գրաւելով եւ երկրորդութիւնը Հ.Մ.Ը.Մ. Ալմելո «Քոյր Մարիամ Մխիթարեան»-ին:



Շաբաթ 26 Նոյեմբեր օրուայ մարզահանդէսը սկիզբ արաւ հրաւիրելով ներկայներուն մէկ վայրկեան յոտնկայս յարգանքի տուրք մատուցանելու մեր բոլոր հայ բանակի եւ Հ.Մ.Ը.Մ.-ական նահատակներուն :

Ըստ մեր աւանդական սովորութեան դաշտ հրաւիրուեցաւ Ալմելո-ի Ս.Գ.Լ. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեանին «ուր ներկաներու մասնակցութեամբ» Տէրունական աղօթքի եւ Հայրապետական օրհնութիւններ փոխանցելով յայտարարուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի 24-րդ մարզական եւ սկաուտական մարզահանդէսի բացումը:



Ըստ օրուայ նախապատրաստուած յայտագրին , ընտրեալ սկաուտական խմբակի շքեղ տողանցքով դաշտասարահի կեդրոնանալէ ետք , տեղի ունեցաւ դրօշակներու բարձրացման արարողութիւնները ուր առաջին Հոլանտական օրհներգով , բարձրացուեցաւ Նեդոլանտներու Թագաւորութեան դրօշակը եւ ետք Մեր Հայրենիքով , Հայաստանեան հանրապետութեան դրօշակը, ապա «Ազատ ու անկախ Արցախ» Արցախի օրհներգով , Արցախի Հանրապետութեան դրօշակը, եւ ի վերջոյ Յառաջ նահատակով Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշակը:





Դրօշակներու բարձրացման արարողություններու աւարտին , բեմ հրաւիրուեցաւ միութեանս ատենապետ Եղբ. Մինաս Արսէնեանը , միութեանս Վարչութեան խօսքը փոխանցելու: Եղբ. Արսէնեանը ներկաներուն ողջունելէ ետք իր ելոյթը սկսաւ Հրայր Մարուխեանի խօսքը արտասանելով ,«Հ.Մ.Ը.Մ. ի գաղափարականը միայն մարզական չէ, սկստութեան չէ, այլ ԱՄԷՆ ԻՆՉ Է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտեղները, հայութեան ազատութեան հետ կապուած ամբողջ յոյսերը, հայութեան պայքարի ամբողջ իմաստն է: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, , Հ.Մ.Ը.Մ. Ի շարքերուն մէջ է որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը»: Շարունակելով « Այսօր դուք օրուայ մարզահանդէսի մասնակից երիտասարդներ առիթը ունիք իրարու մօտ գալով , ծանօթանալու , մարզական խաղերու մասնակցելու եւ սպս խանդավառուելով հպարտօրէն պիտի կարողանաք սփիւռքի մէջ փոքրիկ Հայաստան մը ստեղծելու. Եւ այդ փոքրիկ Հայաստանով պիտի կարողանաք մայր Հայաստանը եւ Արցախը սիրել , պահպանել եւ սպս պաշտպանել»:Եղբ. Արսէնեանը իր խօսքին մէջ շեշտեց Հ.Մ.Ը.Մ. ի արժեւորումները



յայտարարելով « Այսօրուայ մեր հայրենիքի եւ ողջ հայութեան ճակատագրական դժուար ժամանակներու մարտահրաւերներու յաղթահարելու համար , Հ.Մ.Ը.Մ.ը կշնորհէ հայ մարզիկին ու սկստունին հայրենիքի եւ իր հարազատ ժողովուրդին ծառայութեան ազգային դաստիարակութիւն .«**Բարձրացիր եւ Բարձրացուր** » նշանաբանով եւ հայ լեցուի եւ մշակոյթի «**Միշտ Պատրաստ**» ոգիով »:

Եղբ. Արսէնեանը իր խօսքին մէջ եւս անդրադարձաւ միութեանս նախորդ ժամանակաշրջանի կրած դժուարությունները պարզելով « Անցեալ տարիները դժուար տարիներ էին ընդհանրապէս բոլորիս համար եւ մասնաւորապէս մեր մարզիկներու եւ սկստուններու համար. Բայց յաղթահարելով այդ դժուար պայմանները կարողացանք շարունակել մեր հաւաքները եւ մարզական պարսպումները եւ աւելի յանախ երբ ունեցանք մեր սեփական տեղը , տրակը , շէնքը եւ աւելի ճիշտ է ըսել մեր հայկական օճախը . Եկէք ձեռք ձեռքի տալով ոչ մի ճիգ չխնայենք եւ ամէն ջանք թափենք այս մեր գաւազներու օճախը վառ պահելու համար»:



Երբ. Ատենապետը փակեց իր ուղերձը նման շնորհակալության խօսքերով « շնորհակալություն բոլոր հիւրերուն եւ իրենց մասնակից Խումբերուն մասնաւորապէս անոնք որոնք շատ հեռուից եկած են մեր տարեկան մարզահանդէսի մասնակցելու նպատակով ի մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ. Սթոքհոլմին , Միունիխին. շնորհակալութեան խօսքեր կուղենք եւս Հ.Մ.Ը.Մ. Ալքմառ եւ Առնհեմին , շնորհակալութեան խօսքեր կուղենք Երեւան Միութեան , Կիլիկիա Միութեան , Հ.Բ.Ը.Մ. եւս , Հ.Օ.Մ.-ին Հ.Յ.Դ. Գ.Ն. Երիտասարդական միութեան եւ ապա բոլոր ներկայներուն: Միրելի Հ.Մ.Ը.Մ.-ականներ եւ երիտասարդներ հպարտ ու անկաշկանդ յառաջացէք կեցցէ Հ.Մ.Ը.Մ.ը կեցցէ հայ ժողովուրդը:»



Ատենապետի խօսքը աւարտելէ ետք շքեղ տողանցքով մարզադաշտէն ներս մուտք եկան օրուայ մարզահանդէսին սկաւուտական « Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի սկաւուտները եւս մասկազմեցին օրուայ տողանցքն» եւ մարզական մասնակիցները :

Խումբերը մարզադաշտի մէջ կեդրոնանալէ ետք տեղի ունեցաւ սկաւուտական աստիճանաւորականներու եւ պաշտօններու բաշխումը :

Շքեղ տողանցքի աւարտին սկսուեցաւ սրահի ոտնագնդակի մրցաշարը. Այս տարի մասնակից խումբերու մակարդակը բոլորովին տարբեր էր նախորդ տարիներուն. նրանք լաւ պատրաստուած էին նման մարզահանդէսի մրցաշարին :

Օրուայ մրցաշարին մասնակցեցան (սրահի ոտնագնդակի (Կիլիկիա , Երեւան , Հ.Մ.Ը.Մ. «Սթոքհոլմ , Միունիխ , Առնհեմ , Ալքմառ , Ալմեյո 1 եւ Ալմեյո 2») խումբերը : Բոլոր մրցումները բարձր մակարդակի էին եւ մրցաշարի եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. 1 եւ Երեւան միութեան խումբերու միջեւ. մրցաշարը աւարտուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո 1 առաջնութիւնը գրաւելով եւ երկրորդութիւնը Երեւան միութեան:

Սրահի ոտնագնդակի մրցաշարի ավարտով ավարտուեցաւ օրուայ մարզահանդէսը :

Մեղայներու եւ բաժակներու բաշխումը տեղի ունեցաւ Ալմեյօ-ի Ս.Գ.Լ. Եկեղեցւոյ Գալուստ Կուրբէնկեան սրահին մէջ. ուր պարգևատրուեցան մարզահանդէսի մասնակցող բոլոր մարզիկները եւ յուշանուէրներ տրուեցաւ մասնակցող միութիւններու ներկայացուցիչներուն :

Երկօրեայ մարզահանդէսը ավարտուեցաւ խրախմանքով եւ հաճելի կեր ու խումով : Անհրաժեշտ է յիշել միութեանս տիկնաց , ընկերային , մարզական եւ սկաւտական յանձնախումբերու պատրաստական գնահատելի աշխատանքներուն : Մինչ յաջորդ հանդիպումին :

Կեցցէ Հ.Մ.Ը.Մ.ը Կեցցէ Հայ ազգը:
Հ.Մ.Ը.Մ Ալմեյօ-ի Մեկուսի Շրջանի Վարչութիւն

Լուսանկարներ մարզահանդէսէն



Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի 25-րդ Անդամական ընդհանուր ժողով



Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի 25-րդ անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցավ Շաբաթ, 3 Դեկտեմբեր 2022-ին՝ միութեան նորակառոյց շէնքէն ներս: Ժողովին մասնակցեցան 46 անդամներ, 45-ը իրաւասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ Հ.Յ.Դ. Արամ Մանուկեան Կոմիտէութեան ներկայացուցիչ՝ եղբ. Բաֆֆի Փօլօեան:

Մեկուսի Շրջանի անդամական 25րդ ժողովը սկսաւ Յառաջ Նահատակ քայլերգով ապա Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի ատենապետ եղբ. Մինաս Արսենեանը բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ անցաւ ժողովի օրակարգին:

Ժողովի աւարտին, ժողովականները ընտրեցին յառաջիկայ երկամեայ նստաշրջանի նոր վարչութիւնը հետեւեալ քոյր եւ եղբայրներէն՝

Եղբ. Մասիս Վահանեան , Եղբ. Պարգեւ Նազարեան , Քոյր Փաթիլ Տատուրեան

Եղբ. Օհանէս Օհանէսեան , Եղբ. Գէորգ Օհանեան , Եղբ. Բաֆֆի Օգճեան

Եղբ. Ռուբէն Յակոբեան , Եղբ. Արման Խաչիկեան եւ Եղբ. Յակոբ Գասարեան :

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ. Կ.Վ. ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեանը, ուր բարձր գնահատեց ժողովի դիւանը և խօսքը ուղղելով ընթացաւարտ վարչութեան մատնանշեց հիմնական դրական կէտերը, որոնք մարմինը կատարած էր անցնող դժուար տարիներու ընթացքին եւ մանաւանդ մեծ ներդրումը նորակառոյց շէնքի աշխատանքներու մէջ: Խօսքը ուղղելով նորընտիր վարչութեան և ներկաներուն, եղբ. Ֆէտին շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի դերին կարելորութիւնը հայապահպանման գործին մէջ մանաւանդ արեւմտեան երկիրներու մէջ ուր առաւել դժուարութիւններ կան Հայոց լեզուն պահելուն:

Նորընտիր վարչութիւնը, Կ.Վ. ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեանի եւ ընդհանուր ժողովի դիւանի ներկայութեան, կատարեց իր դիւանի ընտրութիւնը հետեւեալ ձեւով՝

Եղբ. Մասիս Վահանեան Ատենապետ

Եղբ. Պարգեւ Նազարեան Ատենադպիր

Քոյր Փաթիլ Տատուրեան Գանձապահ

Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի Վարչութիւն



30 Նոյեմբեր

Հ.Մ.Ը.Մ. Միւնիխ



Հ.Մ.Ը.Մ. Միւնիխ մեկուսի շրջանի մարզական խումբերը մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո մեկուսի շրջանի 24-րդ մարզական խաղերուն, որը տեղի ունեցաւ 25-26 Նոյեմբեր 2022ին, Ալմեյո-ի մէջ:
Վարձքերնիդ կատար եղբայրները եւ քոյրեր:
Հ.Մ.Ը.Մ. Միւնիխ մեկուսի շրջանի Վարչութիւն .





በዚህ ረቀቅ ምረቃ ስር፣ ሆቴል፣ ርዕሰ ሆስ፣ -ኮ ምረቃውን ረቀቅ:

Վերջապես , ինչին՝ եթե ոչ անոնց , որոնք ի սպաս հայու վաղուան երազներին , իրենց ներկան կր զոհաբերեն անսակարկ:




Մերոք Սահակեան





Հանրային հանդիպում

Հ.Յ.Դ. Արա Մանուկեան կոմիտեութեան կազմակերպութեամբ . Հինգշաբթի 10 Նոյեմբեր 2022 Թ.ին , Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի նորակառոյց սրահին մէջ տեղի ունեցաւ հանրային հանդիպում Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանին հետ:



World Cup 2022

Ֆութպոլի աշխարհային առաջնութեան կապակցութեամբ « որը տեղի ունեցաւ Բարթար-ին մէջ» : Առաջնութեան եզրափակիչ փուլերու մրցախաղերու հաւաքական դիտելու նպատակով . միութեանս վարչութիւնը համագործակցութեամբ միութեանս Ընկերային յանձնախումբին հետ . միութեանս սրահին մէջ տեղադրեցին մեծ (Screen) :



Յայտարարութիւն Թիւ 1



Յարգելի Քոյրեր եւ Եղբայրներ ,

Սոյն յայտարարութեամբ միութեանս վարչութիւնը կը հրաւիրէ բոլոր անդամ/ուհի –ներուն , իրենց ներդրումները բերել աշխատանքի շաղուելով հետեւեալ յանձնախումբերէ ներս.-

- I. Մարգական Յանձնախումբ.
- II. Սկաուտական օժանդակ Յանձնախումբ.
- III. Տիկնաց Յանձնախումբ.
- IV. Ընկերային Յանձնախումբ.

Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու կամ արձանագրուելու համար կարող էք վարչութեան մօտենալ մինչեւ 15 Յունուար 2023 Թ.ին:

Վարչութեան հետ կապ հաստատելու համար կարող էք օգտագործուիլ « homenetmenalmelo@yahoo.nl » Է- հասցէն . կամ զանգահարել Եղբ. Մասիս Վահանեանին « 0645540606» համարով:

Հ.Մ.Ը.Մ.-ական բարեւներով

Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ Մեկուսի Շրջանի Վարչութիւն

Տեղեկագիր Թիւ 1

Յարգելի Քոյրեր եւ Եղբայրներ ,

Սոյն գրութեամբ Վարչութիւնս ձեզ կը տեղեկացնէ թէ . իր երկրորդ ժողովին նշանակեց Եղբ. Յակոբ Գասարեանին « Արարատեան կարգի թեկնածու » Միութեանս ընդհանուր սկաուտական խմբապետ:

Հ.Մ.Ը.Մ.-ական բարեւներով

Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ Մեկուսի Շրջանի Վարչութիւն

ընտանեկան պարահանդէս

20 Նոյեմբեր 2022 Թ.ին
Միութեանս սրահէն ներս
մասնակցութեանս միութեանս
մտերիմ եղբայր Արշամ
Պապենականն հետ , տեղի ունեցաւ
ընտանեկան պարահանդէս .
հանդէսին տիրեց ընտանեկան
մթնոլորտը . մինչեւ ուշ ժամանակ
բարձր տրամադրութեամբ եւ ուրախութեամբ ներկաները անցնեցուեցին
խրախմանքը:



Կադանդի հանդէս Ալմելո-ի մէջ



24 Դեկտեմբեր 2022 Թ.ին հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի Վարչութեան կազմակերպութեամբ Միութեանս Սկաուտական խմբապետական կազմի եւ Ընկերային յանձնախումբի ընկերութեամբ . տեղի ունեցաւ ՁՄՐԱՆ ՊԱՊ-ի հանդէս եւ ՊԻՆԿՕ խաղի միջոցառում :

Օրուայ հանդիսութեան միութեանս սրահը յագեցած էր իր անդամներով , համակիրներով եւ ապա իրենց փոքրիկներով .որոնք բարձր տրամադրութեամբ եւ զուարճալի կադանդի երգերով եւ կոչերով դիմաւորեցին Կադանդ Պապին: Սրահէն ներս Ձմրան պապի դիրքաւորուելէ ետք , սկսուեցաւ բանաստեղծութիւններու եւ երգերու արտասանութեան շարքը որով աւարտին սկսուեցաւ խրախճանքն ու պար : Պատրաստուած ծրագրի աւարտին Ձմրան Պապը ներկայ մասնակից երեխաներուն բաժանեց նուէրներ:

Կադանդի հանդիսութեան աւարտին սկսուեցաւ Ընկերային յանձնախումբի կողմէ պատրաստուած ՊԻՆԿՕ խաղերը:



Թուենթա շրջանային Սկաուտական խորհրդաժողով



10 Նոյեմբեր 2022 Թ.ին միութեան « քոյր Թանեա Ատոմեան եւ քոյր Մարիամ Մխիթարեան » սկաուտները Հ.Մ.Ը.Մ. ի անունով 15 շրջանի սկաուտական կազմակերպութիւններու հետ միասին , մասնակցեցան Թուենթա շրջանային սկաուտական խորհրդաժողովին:

Թուենթա շրջանի ընդհանուր պատասխանատուն ներկաներուն ողջունելէ ետք ժողովականները սկսան օրուայ նախատեսուած օրակարգի քննարկումներուն . որոնք էին .-

- ◆ Թուենթա շրջանին մէջ սկաուտական խմբապետական կազմերու եւ սկաուտներու, քանակի կամ որակի զարգացման ծրագրային աշխատանքները բարելաւելու ձեռնարկման մասին:
- ◆ Անվտանգութեան իմացութիւնը զարգացնել սկաուտական շարքերէն ներս յատկապէս բանակումներուն եւ այլ սկաուտական միջոցառումներու ընթացքին:
- ◆ Նիւթական առումով Թուենթա շրջանի սկաուտական կազմակերպութիւնը պետական տնտեսական նուաճումներու պատճառով այս օրերուն կարող այլ նիւթական ծանրաբերութիւններ վերցնէ:
- ◆ 2023 Թ.ին սկաուտական վերապատրաստման դասընթացքներու մասնակցութեան սակերը սահմանուած պիտի մնան 250 Եւրօ ով:
- ◆ Մօտ ապագային պիտի հրատարակուի Հոլանդական սկաուտական հաստատութիւնէ «Scouting Academy» 2.0 դաստիարականութիւններ:
- ◆ Շրջանները զեկուցեցին իրենց ներկայացուցած կազմակերպութիւններու մասին :
- ◆ Ժողովականները անդրացան եւս երկրի տնտեսական անկումի , անշարժ գոյքերու աւելի կայուն եւ կայուն ուժի «sustainable energy» ի մասին:





Սրահի ոտնագնդակի մրցաշար
2022Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբալի շրջանային
մրցաշարերու արդիւնքները .-

Ա.Հ.Մ.Ը.Մ. 1 (Homentmen 1) Կը մրցակցի 2րդ բաժանում աստիճանի խումբերու հետ .

- 14/10/2022	Homentmen 1	1-1	De trgenpartij 1
- 19/10/2022	Germesbergen 1	2-5	Homentmen 1
- 28/10/2022	Homentmen 1	5-6	Heracles Almelo Futsal JO19-1
- 11/11/2022	Homentmen 1	9-3	ZVO/De Herberg 1
- 18/11/2022	Heracles Almelo Futsal 6	11-5	Homentmen 1
- 28/11/2022	Heracles Almelo Futsal 5	4-6	Homentmen 1
- 05/12/2022	RSC1	2-4	Homentmen 1

MAANDAG 5 DECEMBER



RSC 1

2 - 4



Homenetmen
Almelo 1



MAANDAG 28 NOVEMBER



Heracles Almelo
Futsal 5

4 - 6



Homenetmen
Almelo 1

VRIJDAG 28 OKTOBER



Homenetmen
Almelo 1

5 - 6



Heracles Almelo
Futsal JO19-1

VRIJDAG 18 NOVEMBER



Heracles Almelo
Futsal 6

11 - 5



Homenetmen
Almelo 1

WOENSDAG 19 OKTOBER



Gramsbergen 1

2 - 5



Homenetmen
Almelo 1

VRIJDAG 11 NOVEMBER



Homenetmen
Almelo 1

9 - 3



ZVO/De
Herberg 1

VRIJDAG 14 OKTOBER



Homenetmen
Almelo 1

1 - 1



De Tegenpartij 1



Բ. Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանումն աստիճանի խումբերու հետ

⇒	14/10/2022	Homentmen 2	2-3	EBZ` 85 7
⇒	21/10/2022	EBZ` 85 3	5-2	Homentmen 2
⇒	03/11/2022	Excelsior`31 14	5-1	Homentmen 2
⇒	11/11/2022	Homentmen 2	1-0	Excelsior`31 12
⇒	16/11/2022	Heracles Almelo Futsal 16	1-4	Homentmen 2
⇒	30/11/2022	Heracles Almelo Futsal 14	3-1	Homentmen 2

WOENSDAG 30 NOVEMBER



DONDERDAG 3 NOVEMBER



WOENSDAG 16 NOVEMBER



VRIJDAG 21 OKTOBER



VRIJDAG 11 NOVEMBER



VRIJDAG 14 OKTOBER





Ծնորհաւոր Նոր Տարի և Ա. Մեռուդ 2023



Հ.Ա.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչութիւն

Together we build the future

It's time! Donate and together we got through !

Dear compatriot , brothers and sisters,

The construction of our new association building is end!

In order to realize the project, however, additional (and unexpected) costs still have to be covered. These costs have arisen gradually and were not known beforehand.

Once again we appeal to you and ask for your generous donations to successfully realize the project of our new association building.

Donations can be made by bank transfer to the following account number:

EN 83 RABO 01 0335 3683 for the Homenetmen foundation o. v. "

Donation New Build Homenetmen "

For cash donations please contact +31-614286355

*Together we
build the future*



Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի 3-րդ Ընդհանուր ժողով



Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Կ. Վարչութեան ներկայացուցիչ Եղբ. Տէտի Գազանձեանի, միասնութեամբ Արամ Մանուկեան կոմիտէութեան եւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի ներկայացուցիչներու ներկայութեամբ . 4 Դեկտեմբեր 2022 Թ.ժամը 11:00ին Առնհեմ քաղաքի (De pas 44, 6836 Arnhem) մարզադաշտի սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի 3-րդ Ընդհանուր ժողովը:

Օրուայ ժողովին քննարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ-ի 2-րդ շրջանի վարչութեան աշխատանքները : Քննարկումներու աւարտին եւ «Արիւնային, Հաշուեքննիչ եւ Բանաձեւային» յանձնախումբերուն զեկոյցները ընթերցուելէ ետք, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ 3-րդ շրջանի նոր վարչութեան ընտրութիւնը, ներքեւ յիշեալ կազմով:

Եղբ. Բաֆֆի Փօլօեան (Ատենապետ).

Եղբ. Յարութիւն Պաղտասարեան (Ատենադպիր).

Եղբ. Սարգիս Ասլանեան (Գանձապահ).

Եղբ. Շանթ Պետրոսեան (Անդամ).

Եղբ. Արա Ասլանեան (Անդամ)



Կադանդի հանդէս Առնհեմ -ի մէջ

Կիրակի 11 Դեկտեմբեր 2022 Թ.ին, Առնհեմ քաղաքի (De Pass) մարզադաշտի մարզասրահէն ներս, Միութեանս Սկաուտական խմբապետներու կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Զմռան Պապի անակնկալ այցելութիւն մեր ներկայ սկաուտներուն եւ իրենց ընտանիքներուն :



[illegible]

**Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի «ԵՐԵՑ Եղբայր»
ՊԱՐԳԵԻ Ա. ԱՍԼԱՆԵԱՆ**



Ծնած է 1 Յուլիս 1942 Թ-ին Իրաք-ի Պաղտատ « մայրաքաղաք »- ին մէջ : Ընտանիքի ծանր պայմաններու պատճառով իր հիմնական ուսումը կատանայ թաղամասի պետական վարժարանին մէջ . նման պայմանները չկարողացան խոչընդոտել պատանի եղբորը իր հօրմէ եւ գերդաստանէն ստանալ իր ազգային եւ հայկական « լեզուի , պատմութեան եւ կրօնքի » ուսումները:

Երիտասարդ եղբայրը իր երկրորդական ուսումը ստանալէ ետք 1967-68 Թ.ին կարողացաւ հաջողութեամբ աւարտել Ֆինանսական եւ հաշուապահական գիտութիւններու հաստատութիւնը:

1976 Թ.ին Երիտասարդ եղբայրը կը ամուսնանայ եւս Հ.Մ.Ը.Մ. ական քոյր Ժանեթ Գեորգեան-ին հետ եւ կունենան 4 զաւակներ « Արա , Նինա , Նայիրի եւ Սարգիս ».

2007 Թ.ին երկրի անապահով եւ ծանր պարագաներու պատճառով ընտանիքով կտեղափոխուին Հոլանդական Առնհեմ քաղաք ուր իբր խորհրդատու եւ փորձառու անձնաւորութիւն հիմնական եւ կարեւոր դեր կունենայ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի ձեւաւորման եւ 2015 Թ. հիմնադրութեան աշխատանքներուն մէջ: Եղբայր Ասլանեանը մինչեւ այսօր միութեանս աշխուժ եւ գործունեայ անդամներէն մէկն է:

Հայրենասէր խանդավառ եղբայրը իր պատանութեան ժամանակին մասնակցած էր Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի մարզական եւ սկստական ձեռնարկներուն : Նա մասնակցած էր Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ « այդ ժամանակաշրջաններուն միութեան օգտագործած ՆՈՐԱՇԷՆ շրջան » -ի սեղանի թեինիսի խումբի մրցաշարերուն եւ ապա միութեան հեռաւոր լող ախոյան մրցաշարերուն :

1970-72 Թ.ականներուն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի վարչութեան կազմին մէջ « Եղբ. Հայկ Պօսդանեանի ատենապետութեան ժամանակաշրջանին ».

1994 Թ.ին վերստին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի վարչութեան կազմին մէջ « Եղբ. Յովհաննէս Եսայեանի ատենապետութեան ժամանակաշրջանին ».

1996 Թ.ին վերստին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի վարչութեան կազմին մէջ « Եղբ. Վահագ Մեսրոպեանի ատենապետութեան ժամանակաշրջանին ».

2003-06 Թ.աններուն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի վարչութեան կազմին մէջ վարելով Ատենապետի պաշտօնը: իր ատենապետութեան ժամանակաշրջանէն մինչեւ այժմ ներկայ եւ յայտնի ձեռքբերումներէն մէկն է , ներկայ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի ներքին փակ մարզական դահլիճը « որը կարողացաւ միութեան բարերարներու եւ I.R.D. կազմակերպութեան նիւթական օժանդակութեամբ , նիւթական հասոյթներ ապահովել նման ծրագիրը իրականացնելու համար »:



Իբր տիպար Հ.Մ.Ը.Մ.ական հարկաւոր է վկայել եւ մեր ցանկութիւնները յայտնելով, Վարձքդ կատար Եղբ.Պ.Ա.Ասլանեան մաղթելով ձեզ առողջութիւն եւ առաջընթաց յաջողութիւններ:

Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի Վարչութիւն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ⇒ Խմբագրական «Մարզիկ»-ի թիւ 426 .
- ⇒ ՀՄԸՄ-ի Միջդիւանական 10-րդ Խորհրդածողովի Բացման Պաշտօնական Հանդիսութիւնը.
- ⇒ Անթիլիասի Մայրավանք Եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք Այցելութեամբ՝ ՀՄԸՄ-ի Միջդիւանական 10-րդ Խորհրդածողովը Աշխատանքները Աւարտեց Յաջողութեամբ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.—մեծ ընտանիքը Անթիլիասի Մայրավանքին մէջ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազումար նիստեր « Պէյրույի մէջ».
- ⇒ Խմբապետական կազմի կազմակերպական աշխատանքներ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղի հիմնադրութիւն Շուէտի Օրպրու քաղաքին մէջ.
- ⇒ Հաղորդագրութիւն « Հ.Մ.Ը.Մ. Ֆրանս մեկուսի վարչութեան » .
- ⇒ Հաղորդագրութիւն « Հ.Յ.Դ. Ուղեկից միութիւններու խորհրդածողով » .
- ⇒ Լոյս տեսաւ Մարզիկ թիւ 426.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի շրջանի 24-րդ մարզահանդէս.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի 25-րդ Անդամական ընդհանուր ժողով.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Միւնիխ .
- ⇒ Ուր՝ հայն՝ Հ.Մ.Ը.Մ.-ի տղերքն ի՞նչ.
- ⇒ Հանրային հանդիպում .
- ⇒ World Cup 2022.
- ⇒ Յայտարարութիւն Թիւ 1 « Յանձնախումբեր».
- ⇒ Տեղեկագիր Թիւ 1 « Միութեանս ընդհանուր սկստութեան խմբապետ».
- ⇒ Ընտանեկան Պարահանդէս .
- ⇒ Կադանդի հանդէս Ալմելո-ի մէջ.
- ⇒ ԹՈՒԵՆԹԱ շրջանային սկստութեան խորհրդածողով.
- ⇒ Սրահի ոտնագնդակի (Homentmen 1 եւ Homentmen 2) խումբերու մրցաշարերու արդիւնքները .
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի 3-րդ Ընդհանուր ժողով.
- ⇒ Կադանդի հանդէս Առնհեմ -ի մէջ.
- ⇒ ՓԱՐՈՍ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի «ԵՐԵՅ Եղբայր » ՊԱՐԳԵԻ Ա. ԱՍԼԱՆԵԱՆ .
- ⇒ Բովանդակութիւն .

Հասցէ : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo

Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
: <https://stichtinghomenetmen.nl/>

Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմելո

Instagram : [homenetmenalmelo](https://www.instagram.com/homenetmenalmelo) 

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -ով

